

դարիս դեսպանատանց զինուորական պաշտօնատեւորք:

Ասկէ իւր երկու տարի յառաջ գաղղիական նաւախմբի մը Բրոնշդաւ ըրած այցելութեան դիմաց՝ ուսական նաւախմբի մը Թուլոն փոխադարձ այցելութեան գալու լուրը շատ եւ շատ անգամ կրկնուելէն ետեւ, վերջապէս ամիս մը կայ՝ պաշտօնական եղանակաւ հաստատուեցաւ, եւ հաւանաբար պիտի կատարուի առաջիկայ Հոկտեմբերի կէսերը: Անելորդ է ասել թէ Գաղղիացիք մեծ պատրաստութիւններ կը տեսնեն իրենց նաւախմբին Ռուսիայի մէջ գտած սիրւելի ու ջեղ ընդունելութենէն շատ աւելի փառաւոր ընդունելութիւն ընել ուսական նաւախմբին:

Ժամօթ էր որ Պիզմարզ իշխանն հիանդ է Ի Քիսինկէն. ըայց ընդհանրապէս կը համարուէր թէ իւր սովորական գոտադասէն (societique) կը նեղուի. վասն զի իշխանին անձնական բժիշկն անոր հիւանդութեան վիճակը մեծ զգուշութեամբ ծածուկ կը պահէր ամէնէն: Բայց յետոյ՝ երբ ապաքինեցաւ եւ վտանգն անցաւ, նոյն բժշկին հրատարակած տեղեկագրէն իմացուեցաւ իրաց անցեալ ու ներկայ վիճակն: — Գերմանիայի կայսրը Կիւսն գտնուած միջոցին այս լուրն առնելով անմիջապէս (Մեպտ. 19ին) հեռագիր մուղղեց նոյն իշխանին, որուն մէջ անոր ծանր հիւանդութեան վրայ իւր ցաւակցութիւնն եւ ապաքինելուն համար ուրախութիւնը յայտնելէն ետեւ, զինքը կը հրաւիրէ որ առաջիկայ ժմեք, փոխանակ իւր սովորական քնակավայրերն անցրնելու, — որոնք նոյն եղանակին մէջ չեն կրնար նպաստաւոր ազդեցութիւն ունենալ իւր վրայ, — միջին Գերմանիայի կայսրական դղեկաց միոյն մէջ հաստատէ իւր քնակութիւնը: — Պիզմարզ միեւնոյն օրը հեռագրով շնորհակալ եղաւ կայսր. ըայց յայտնեց որ նաեւ իւր բժշկին կարծեաց համեմատ՝ պէտք է որ շատ տարիներէ վեր վարժած տեղերը ընայիլը շարունակէ, որովհետեւ իւր ջղային քնակութեան եւ ծերացեալ հասակին նայելով, կայսրը շնորհակալ

հրաւիրին հետեւիլն այնչափ օգտակար չ'երեւար: — Այս դէպքը Գերմանիայի մէջ մեծ ուրախութիւնն պատճառեց եւ անկէ դուրս ալ ոչ փոքր ազդեցութիւնն ըրաւ. որովհետեւ կը համարուի որ ասով վերջ կ'առնու կայսեր եւ ծերունի իշխանին մէջ վերջին տարիները տիրող անհամոյ վիճակը:

Պրագիլիայի հասարակապետութեան մէջ յեղափոխութիւն մ'եղած եւ քաղաքական պատերազմ բացուած է: Մեկը ծովակալն ամնոյս կէսէն սկսեալ Ռիոյ ճանէլոյը բազմամարդ մայրաքաղաքը կը ռմբակոծէ, որով ոչ միայն մեծ վնաս կը հասնի առեւտրոյ, շքեղ շինուածները հոյ գարակ կ'ըլլան, բոլոր քնակիչք արողողի մէջ կը մնան, այլ նաեւ զոհ կ'ըլլայ բազմաթիւ անմեղաց կեանքը: — Այս օրուան (Սեպտ. 26ին) հեռագիրները միաբան կը ծանուցանեն թէ ռմբակոծութիւնը տակաւին կը շարունակէ, եւ հասարակաց համարումն այն է՝ որ Մեկոյ յաղթական պիտի ելլէ այս կողմէն: Շատերը կը կարծեն թէ այս յաղթութեամբ վերջ պիտի տրուի հասարակապետութեան եւ նորէն կայսրութիւն պիտի հաստատուի. ըայց հակառակ կարծիքը պաշտպանողներ ալ շատ կան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՍՈՒԽԵՆԳՈՒՆ

ԳՐԱԿԱՆ — Նորագոյն աղբերք եզնկայ Կողբացոյ. 289: — Հինոր գլակ. 294: — Ազգային տարակութիւնք 1892 տարւոյ. 301:

ՄԱՏՆԱԳՐԱԿԱՆ — Վարդապետութիւն առաքելոց արմկաւեքական կանոնաց մատենան. 303:

ԹՂԽԻՅՈՒԹԻՒՆ — Նամակ առ Է. Բ. Տ. 309: ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Հայ գիւղական տունը. 311: (Պատկերաւ):

ՈՂԻԳՐԱԿԱՆ — Սեւ ծովու ուսական եղբորը. 316:

ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ՏԵՐԵՒԻՒՆ. 319:



ՀՐԱՏԱՐԱԿԻԶ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ԽՐԱՄԱԿԻՐ

Վ. ՌԱԳԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆՆ

ՎԻՆԵՆԱ. ՄԻԻՔԱՆԵՆԱ 89ԱՐԱՆ